

ՀԱՅՈՒԱԳԻՏԱԿԱՆՀԱՅՈՒԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԲԱՆՔ ԽՄԱՍՏԱԽԻՐԱՅԻ ՄԷՋ

(Սուբբեթ Ա. Վանեսիկ 1853)

Գեղագործող «Նկարիչ»։ Քանզի ոչ զեղագործողի՝ աղօթիւց տացի զիծ և զեղցկութիւն նկարից, և ոչ երածտականաց՝ երածիշտ և հագներգործիւն, եթէ ոչ ուսմամբ ընդունին զիմոռութիւն արուեստիցն (էջ 54)։

Մահայից «մահուամբ լցուած, թշուառ, մահկանացու»։ Մի կաւ ունին ամենեքեան ի նախնեաց, որք ի ծիրանիս իցեն և, որք ի խոր աղքատութեան մահալիցը են (էջ 35)։

Քաղաքոնի «քաղաքացի կի՞ն»։ Որպէս պատուիրեցաւ և ամենեցուն այսպիսեաց՝ քաղաքաց և քաղաքունեաց և բնակչաց՝ յիշել զԱսուած զի է, և դատաստան արձակէ ի վերայ անիրաւաց՝ յորում լինի վախճան ամենայնի (էջ 54)։ — Ժորը կիսաստ է և բառիս իմաստն ալ կասկածելի։

Թեանն նորա (էջ 21). Ահազին դդորդ-մունք՝ որ եղեն յայնմ ժամու (էջ 27)։ Խոյրաքանդակ «Խոյր կամ թագ շնորդ»։ Աղդէ կերպասազործ և խոյրացանդակ թագաորդին (էջ 32)։

Կաղանդ. թերես «ինջոյք, հացկերոյթ» կամ նման իմաստով մը կը գործածուի էջ 40. Եւ եղիջը ի ինդրել զկորուսեալս և այց առնել մոլորելոց և որպան լինել ընդ զրեալսն, զնել կաղանդս թեկելոցն և պահել անարատ զողջան։ — Հետացըքը ասան է իմանալ թէ ի՞նչ ունի ասորին։

Կտաւավաձառ «կտաւ ծախորդ»։ Հրեայր գիտակը օրինացն և մարգարէիցն՝ կտաւավաձառոց, և ուրա հաւանեալը աշակերտեցան խոստովանելով ի Քրիստոս (էջ 32)։

Մարմաչ «զողիակոս, կենդանակիրաք»։ Ի խորոց և ի կիւաց և վոնկաց և ի բախտից և ի ծննդոց, որովք պարծին Քաղացիցիք մոլորականը, և յաստեղագիտութենէ և ի մղավաշէլոց՝ յորս յուացեալ են յիմարեալըն (էջ 33)։ — Փոխառեալ է ասոր. մալված հոմանիշն, ինչպէս կը ցուցնեն Լարուբնեայ զրոց հրատարակիչը (անդ, էջ 33 ձան), WZKM 4. 191-2 և Հիւաշ. Arm. Gram. էջ 312։

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐՆԱՄՐՈՐՈՒԱՑԻՌԸ ՄԱՏԵԽԱԳԻՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

(ապ. Վանեսիկ 1847)

* Քաղաքումի = Մայր կամ մեծ քաղաքն կախուող փոքր քաղաք կամ աւան, երբե անոր զուսործ. ինչպէս Դատ. Ա. 27. «Եւ ոչ ժառանգեաց Մանասէ զինթան... և ոչ զգաներանորա»։ Ծայցէր - լու. viculus (աւան, զիու)։

(Մ. Խ.)

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԿԱԲՈՒԲԻՆԱՑԻ ՄԷՋ

(ապ. Վանեսիկ 1868)

Դղորդումն «երկրաշարժ»։ Այսուհետեւ ուսարուց և ի միտ առէք վասն մեծի զգորդմանն՝ որ եղեւ ի ժամու իւաչելու

Անդադեղորին «մաքրութիւն»։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անալտեղութեամբ հոգոյ և մարմոյ, չնորհօք ցեառն մերոյ (էջ 194)։

Անձնամատն «անձնասուր»։ Իշեալ յամուր աշտարակէ բնակութեանն՝ անձնամատն եղեն ի ծես նոցա (էջ 342)։ — այս նշանակութիւնը չունի Աթ։

Քացմուտարուին «շաս ստար լինելը, մեծ տարբերութիւն»։ Խակ մարդկան՝ որք վիճակիցան թանձրութեան մարմոյ և աղցաւոր կրից և այլայլական բարուց, ան-

կարելի է առ Ամենամաքուրն մերձ կացուցանել զրազմուտարութիւնս մեր, բայց միայն առաջինութեամբ և պարկեցած և անարաա կրօնաւրութեամբ (Էջ 230):

Ըիրադրիչ «ոտքին տակ առնող»։ Միևնաց վահանակիցք լիցուց սպառազէնքս և մի կործանիչը, միմենց մարտակիցք և մի ընթագրիչը (Էջ 545):

Կարօտակից «իր քաշած կարօտին կցորդ, նոյն կարօտվ տանջուող»։ Տեսեալ զմեզ յայսպիսի վտանգ՝ լաց ընդ մեզ, տըրտմակից լեր մեզ, կարօտակից լեր (Էջ 272):

Մեկնակ «մեկնոց, կրօնաւրի վերարկուա». Հւմբերորդ դաս եկեղեցւոյ՝ անազանոսք, որ թարգմանին ընթերցողք, և ունին զնոյն զգեստ պատմումանի հոլանի, բաց յուրաքչն, և սոքա ոչ առանց գոտուոյ, այլ զօսի կապնի ի վերայ պատմումանին, որք արտաքոյ եկեղեցւոյն ելեալ, թէ կամի՞ն մեկնակս զգենուզ մարթ է (Էջ 84): — Բառարանները չունին այս իմաստը, անշոշտ առած են «մեկն, պարզ» սովորական նշանակութեամբ։ Նշանակութեան զարգացման համար հմմտ։ Հոմանիշ մեկնոց ձեր։

Մոմեղինաւոր «ձեռքը մոմ բռնած տիրացու կամ զպիր»։ Գային նախ մոմեղինաւորքն, ապա որբ զգաւազանն ունին և ապա սարկաւազքն (Էջ 201):

Յասաշամուկ «առջևէն մտնել, առաջ ինքը մտնել»։ Զի լիցի այնմ որ յեկեղեցին յառաջ մտաւ ի խրանս բռն յետոյ մտեալ և եպիսկոպոսն անդ յետոյ, աստ յառաջամտէ (Էջ 202):

Յառաջընթացնեալ «առջևէն զացող»։ Աղօթք մեր նմին օգնական ըստ որում հաստատէ զայս տարակոյս յառաջ ընթացեալ բանիս երանելիս այսպէս (Էջ 176):

Նախակատարի «շատ կատարեալ լինել, զերազանց զառնալ»։ Բայց բանզի էութիւն աստուածութեանն վեհագոյն զոլով ամենեցուն նոցա, ըստ հպատորութեան զասուցն միջնորդութեան զամենեսեան բզնոսա առ ինքն վերացուցանէ, այսպէս և որ մերս է ցանանայակետ, որպէս մարդկան հասանելի է նախակատարեալ (հաս-

նելով գերազոյն կատարելութեան, որչափ մարդ մը կրնայ հասնիլ) և համեմատեալ սրբութեանն Աստուծոյ և աստուածացեալ՝ կարող է և զնուաստագոյնսն առ ինքն բարձրացուցանել (Էջ 231):

Նկարակերպի «նկարներով զարդարել»։ Ի վերայ նորին արկաննն զվակասն, որ այժմ կոչի առ մեզ ուսանոց, այնպէս ըստ որում հրամայեալ է ի զանազան նիրթոց նկարակերպեալ (Էջ 147): Ամ ունի նկարակերսել «յօրինել, զարդարել»։ արգեօք նոյն բառն է:

Նուաձիչ «նոււաճող»։ Պատարազն հաշտութեան նուէր է, ի ծառայէ տեառնն մատուցեալ և ի խաղաղութիւն նոււաճիչ (Էջ 155):

Պաշակամբ «եկեղեցւոյ բեմ, ուրկէ սարկաւազը աւետարանը կը կարդայ»։ Գայ հանդերձ աւետարանաւն առ զուրս խորանին կամ յամպոնն և պաշտկամբ կիւսամարկաւազի ընթեռնու սարկաւազն զաւետարանն (Էջ 205): — Մեզի ծանօթ պատզամ բառն է նոր առումով։

Պատրուակելիի «ծածկելու, որ պիտի ծածկով»։ Մի՛ արտաքս փայլեցուցես զորս հանդերձեալ բանս ցուցանէ, որք են պատրուակելիք որպէս զրբութիւն սրբութեանց, այլ եկեղեցիւ պահպանեալ (Էջ 229):

Պոսէօրեօս «մերձեցիք, ով Աստուած»։ Բացազանչութիւն՝ որ ծողովուրզը կ'ընէ, երբ սարկաւազը աւետարան կարդալու կը պատրաստովի պոսիուում ըսելով։ Կը համապատասխանէ արդի «ասէ Աստուած» ձեին։ հմմտ։ Լմբ. մատ. Էջ 208. «Քահանայն, Արրոյ Աւետարանիս»։ — Սարկաւազն միայն։ Պոսիուումէ։ — Փողովուրդն. Պասէօթէոս»։ — Նոյնը կը զրտնեմ նաեւ Գաթընեան — Ցաշեան Պատարազամատոյցք՝ Էջ 535 պոսէօրեօս, այլ թ. Վասահարեկաւ, Էջ 563 պաստարեկաւ, կամ միայն ատրեկաւ՝ Էջ 657։ Կու զայն։ որօսէ ծ Թեօչ հոմանիշ ձեէն։

Պտղաւու «պատի, այն է եկեղեցւական տուրք վճարող»։ Վաստակաւորք, առընթերակայ ժողովուրդ պատղատուք և ուխ-

տաւորք, ողորմածք և հաւատացեալք (էջ 430): Բառին այս առումը ծանօթ չէ բաւարաններուն:

Միրվիկաացորին «սերովքէներուն օրհնարանութիւնն առ Աստուած»: Մեկնութիւն սրովքէաացութեանն աղօթից: Աստուած սուրբ՝ որ ի սուրբս բնակեալ ես... (էջ 314):

Վաճառիչ «ծախող, վաճառող»: Վաճառկրպակը խորանացն բազմութեան կամ յաղագս զբանանայս նորին վաճառիչս յաճախութեան (էջ 437):

Վերաբերուղալսու «դէպի բարձր՝ դէպի երկինք ամբանալլու ձեռվ»: Հոգուով և ճշմարտութեամբ զերկիր պագանելն. այսինքն զիմանալի միտս առ իմանալին Աստուած վերաբերուղալս ձգտեցուցանել (էջ 111):

Վերապատուրին «նորէն ճառել, նորէն կրկնելը». Այսպէս և այժմ ես զարոցն ամենից նուրէն վերանառութեամբ անուանցն (էջ 424): Այս բառը ունի ԱՅ, բայց կը մեկնէ «բացարութիւն»: որ տեղին, ինչպէս և բառին կազմութեան յարմար չէ:

Վերմիկարել «ի վեր ընդունիլ»: ՏիրԱստուած մեր, զբազկատարած զաղաշանա ծառայից բոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան բռում (էջ 205):

Փաղիի «շաղափիլ, ապականիլ»: Նոյնապէս և փոանգք՝ զի տեսին զժառանգաւորս ի կանայք գինութեամբ գիաղիկեալ, և զնուէրս եկեղեցւոյ ի պէտս որդոցն ծախեալ, բարձին զունելն նոցա կանայք (էջ 184):

Փայտ համարոյ «հաշուեփայտ, չէթէլէ»: Համար տուրեւաոիցն՝ կրպակաւորացն է գործ. յեկեղեցին՝ որպէս ի կըրպականոց, մի հարկաւորէք զմեզ փայտ համարոյ կախել և զշնորհ ողորմութեան թրիստոսի ի թիւ արկանել (էջ 107): — Քաղաքակրթութեան պատմութեան տեսակէտով կարնոր բառ մ'է: Հաշուեփայտը ուրեմն այն հին ժամանակներն ալ կար և մարդիկ վրան դանակով զիծեր ցաշելով՝ հաշիւ կը պահէին:

Փեռնիկել «մեկնել, պարզաբանել»: Այսան և այսպէս երանելի հայրս (Ա. Դիու-

նեսիոն) ուսուցանէ մեզ զեկեղեցական կարգաւորութիւն... զոր կարեոր համարեցայ ըստ կարգի խուզողութեամբ եւս փեռնեկել առաջի այնոցիկ որք ինդրեն զիմացութիւնն (էջ 234): — Փեռնեկել «Բաժնել» բառն է, որ հոս նոր իմաստ մը ստացեր է:

Փողոց «երկու շարք կանգնած մարդոց մէջտեղ բաց թողուած տարածութիւնը, որով շբաղիր անձը պիտի անցնի»: Աղքա եկեալ կանգնին առ դրունան. որպէս և զային նախ մոմեղինաւորքն, ապա որք զգաւազանն ունին, և ապա սարկաւագքն, և յետ նոցա քահանայցն ոչ բոլոր, այլ մի զմիոյն կնի յերկայնն տող երկու զամ մինչեւ ի զուռն՝ մէջն փողոց և դէմք իւրեանց ի միմեանս (էջ 201: — Մանօթ փողոց «անցք» բառին մէկ նոր և կարեոր ասումն է, որ բառարաններու մէջ անտես է առնուած:

Հ. ԱՃԱՌԵՑԱՆ

ԻՆԳԻԱՏԵՂԱՇԱՐԺԱՐ (Autoloomotive)

Գաղուոյ մէկ Յեմարանոցին մէջ քանի մը տարի առաջ կը տուցուէր զետեր ընելու ինելու ինելութեանէ բըսնուած ասորինակ ինենց մը: Սա կը պնդէր թէ զատծ է արականը տեղաշարժ մը՝ որ ինցն իր միայս կը կրեր երկարուուր զիծերը, ինչպէս խուզնչն իր պատեանը: Տեղաշարժն հետպէսէ որ առաջ երթարքը սոյն զիծերն իր վրայ ու զայն անմիջակէս կրկնի իր առաջն պիտի զիւր: Այս կիրառէ, որ բայց արքէր ինչնչը, քանի մը մեզ երկաթուուր զիծով կ'ունանը անկերջ երկաթուուրինք:

Թօւառ ինելագարին զաղափարը այժմ արդինարեւուած է շինութիւններու Ընկերութեան մը կողմէ, որ կաց մը ծրագրած է Անձարայի անապատն անցնելու համար: Ան եր վրան կը հաւաք զետնի երկաթեայ առղերք և կը արածէ ճիշչ այնպէս՝ ինչ կերպով որ ոզած է իննողը: միայն այս ասքերութեամբ, որ ձուզեր փոխանակ երկաթի՞ յոյժ դիմացկուն դաշկան ինչէ (εαυτοւշօւս) են, Տեղաշարժութեան այս մէջոցով անապատն անցնելու ինդրիքը՝ առանց ուղարկ օգուտեան լուծուած կը թուի: Այս ասքիս կը կազմէ եզմարիս յեղաշլում մը, և անզամ մը ևս կ'ապացուցանէ՝ որ յիմարքնեանը զբէմք մէկտ սահմանակից է հանճարին հետ-